

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

26 Յունվարի.

Արարատի ներկայ համարում հրատարակուեցաւ Վեհափառ Մական Հայրապետի ընդհանրական Կոնդակը Լեոն XIII Պապի գրութեան առթիւ, որ հրաւիրում է Հայաստանեայց եկեղեցին գալ ի հնազանդութիւն Հռովմայ գահին, ինչպէս իբրեւ թէ ի հնումն եղել է: Բնական է, որ Հայ Ընդհանրական Հայրապետը պէտք է զգուշացնէր իւր հօտն այդպիսի մոլորեցուցիչ գրուածքներից և պաշտպանէր Հայաստանեայց եկեղեցու ինքնուրոյնութիւնն կատարելով իւր սրբազան պարտքը:

Պապի կոնդակը մեծ աղմուկ հանեց և այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ նա ուղղած էր Հայ եկեղեցու դարաւոր իրաւանց և աւանդութեանց դէմ և ձգտում էր խախտելու Հայաստանեայց եկեղեցու անկախութիւնն, որ հայ ազգի պահպանութեան ամենագլխաւոր նիւթն է եղած և նորա գոյութեան հիմնաքարը: Հայաստանեայց եկեղեցու այս նշանակութիւնը բնականաբար առիթ պիտի տար բոլոր հասկացող Հայերին ի մի ձայն զինուելու Պապի կոնդակի դէմ, որ ձգտում էր եկեղեցու այդ նշանակութիւնը կոտորել և այդ ձգտման յաջողութեամբ դարերի ընթացքում ամեն նեղութեանց տանելով իւր գոյութիւնը պահպանող Հայ ազգից պիտի կազմէր մի անազգ և անլեզու—պապապաշտ ժողովուրդ, որ բացի հռովմէականութիւնից ոչ մի գոյն չպիտի ունենար. ինչպիսի են աշխարհիս երեսին պապականութիւն դաւանող, քաղաքական անկախութիւն չունեցող ժողովուրդք: Սոցա համար ոչ ազգայնութիւն կայ և ոչ ազգային լեզու, սոցա բոլոր մտաւոր և բարոյական էութիւնը ձուլվում է քաթոլիկութեան մէջ: Սոքա կարծես բնական մարդիկ լինելուց դադարում են կորցնելով ամեն ազգային զգացմունք, ամեն աշխարհավարական ձգտումներ: Հասկանալի է, որ այսպիսի վտանգի դէմ պէտք է բոլոր հայ եկեղեցական և հասկացող դասը զինուէին և վտանգի առաջն առ-

նկիւ համար շարժէին իրանց գրիչը, յօգնութիւն կոչելով թէ ընդհանուր և թէ նոյն իսկ պապականութեան պատմութիւնն, որ շատ խրատական և զգուշացուցիչ նիւթեր բովանդակում է իւր մէջ մարդկութեան հասուցած իւր անթիւ վնասներով և հակաքրիստոնէական ուղղութեամբ: Եւ յիշաւի մենք տեսնում ենք Տաճկահայոց մամուլում բազմաթիւ ընտիր յօդուածներ ընդդէմ Լեոն XIII Պապի կոնդակի, որ հրաւիրում է հայ աղքէն և եկեղեցին ի հնազանդութիւն Հռովմայ իշխանութեան, խոստանալով հոգւոյ փրկութիւն և նիւթական երջանկութիւն:

Ոչ մի քրիստոնեայ ազգ կարիք չունի առաջինը պապականութիւնից ստանալու, քանի որ նորա աղբիւրը—Սուրբ Գիրքն ամենեցուն սեպհականութիւն է. իսկ երկրորդն՝ աշխարհային երջանկութիւն անկարող է տալ Պապն, որ ինքն էլ զուրկ է նրանից: Այս հասկանալի է զարգացած դասին, որ կարդում է, որ տեղեակ է պատմութեան, որ հետեւում է աշխարհումս կատարվող իրողութեանց, հմուտ է ամեն վարդապետութեանց և վարչութեանց ձգտումներին և նպատակներին՝ բայց դժբաղժաբար հայ ազգի մեծամասնութիւնն զուրկ է այդ մտաւոր զարգացումից, ուստի և նորա պահպանութեան և զգուշացուցման համար աւելի էական միջոցներ հարկ է գործ դնել, քան գրաւոր յօդուածներն, որոնցով ուղղուած էր անցեալ տարի Տաճկաստանի հայ մամուլը: Մենք չենք ժխտում խօսքի նշանակութիւնն և կարեւորութիւնն: Գովելի են թէ հայ եկեղեցականաց և թէ հայ խմբագրութեանց ջանքն ու եռանդը խօսքով պաշտպանելու հայ եկեղեցու անկախութիւնն ու ազգի գոյութիւնը Հռովմի ոտնաձգութեանց դէմ, բայց աւելի կարեւոր է որ խօսքն իրականութիւն ստանայ, մարմնանայ գործով:

Պապականութիւնը մի ամուր կազմակերպված մարմին է, որոյ իւրաքանչիւր անդամը ճշգրութեամբ կատարում է իւր պաշտօնը: Պապը գլուխն է, որին ծառայում են բոլոր անդամները անպայման հնազանդութեամբ և կատարեալ ճշգրութեամբ: Նա ունի մի լաւ կազմակերպուած զինուորութիւն—եկեղեցա-

կան դաս, որ ամեն միջոցներ ունի և գործ է դնում նրանց իւր գլխի խորհածն և արտասանածը մարմնացնելու, իրականացնելու համար: Պապի խօսքին հետևումէ քաթոլիկ եկեղեցականաց անխոնջ ջանքն իրականութիւն տալու այդ խօսքին, ջերմեւանդ քաթոլիկ աշխարհականք էլ այդ ջանքին մասնակցում են իրանց ազդեցութեամբ և դրամական նպաստներով:

Պապը խօսքով յայտնեց ցանկութիւն հայ եկեղեցու անկախութիւնը ջնջելու և հայ ազգն իւր իշխանութեան ենթարկելու — և ահա բազմաթիւ քաթոլիկ քարոզիչներ — ճիզվիթներ կցըրուին հայ հասարակութեանց մէջ և կսկսեն իրանց աշխատանքը՝ միամիտներին կեղծ փաստերով կաշխատեն մոլորեցնել, կարօտեալներին նիւթական միջոցներով կխաբեն, այլոց երազական խոստումներով կգայթակղեն: Այս միջոցներն մի միամիտ և տգէտ ժողովրդեան վերայ աւելի ազդեցութիւն գործելու ընդունակ են քան լրագրական յօդուածներն և հրատարակութիւնք, որոնք հայ ազգի մեծամասնութեան համար անընթերցանելի են և անհասկանալի մեռած տառեր: Դժբա անշուշտ կշիւ և նշանակութիւն ունեն մեծ կենդրոնների համար, որոց հասարակութիւնք զարգացումն ունին և աշխարհիս հանգամանաց և վիճակին վերայ որեւէ հայեցուածք ունին: Բայց հայ ազգի մեծամասնութիւնը գաւառներում զուրկ է այդ երջանիկ մաւաւոր վիճակից, ուստի և սոցա պահպանութեան համար աւելի կարեւոր են կենդանի խօսք, արթուն հովիւների ներկայութիւն և ի կարեւոր դէպս նիւթական միջոցներ: Պապութեան դէմ գրաւոր պայքարի մէջ երևումէ մեծ յաջողութեամբ յաղթանակը տարան բանասէրներն իրանց հիմնաւոր և քրիստոնէական սգով գրած յօդուածներով, որոնք ծառայում են ճշմարտութիւնն երեւան հանելու և լուսաւորեալ դասի վերայ արդիւնապէս ներգործելու համար: Բայց ազգի մեծամասնութիւնը՝ տգէտ մասը, հասու չէ այդ գրուածքներին, բանաւոր յաղթանակին — նորա պաշտպանութեան համար կարեւոր են զգալի և ազդու միջոցներ:

Ուստի և յայտնելով մեր յարգանքն այն անձանց, որոնք հայ եկեղեցու անկախութեան և սրանով ազգի գոյութեան պահպա-

նութեան ախոյեան հանդիսացան իրանց գրչով ընդդէմ Պապական դաւանութեան, հրաւիրում ենք Կ. Պօլսի պատրիարքարանի և ազգային ժողովի առանձին ուշադրութիւնը նորա վերայ, որ առաւելապէս հագ տանեն այն միջոցների գործադրութեան, որոնք կարեւոր են ազգի մեծամասնութեան պաշտպանութեան համար պապականութեան արբանեակների դէմ: Մենք հրաւիրում ենք Կ. Պօլսի պատրիարքարանի և ազգային ժողովի ուշադրութիւնն առանձնապէս այն պատճառով, որ ոչ սրբազան Պապի կոնդակն և ոչ էլ նորա արբանեակ—ճիզվիթները չեն կարող ազդեցութիւն ունենալ Ռուսաստանի վերայ, որովհետև Ռուսաստանի պետական օրէնքները խիստ արգելքներ են դնում օտարադաւան քրիստոնէից կրօնափոխութեան: Քարոզչութեան իրաւունքն այստեղ բացառապէս միայն տիրապետող յունադաւան եկեղեցու պաշտօնէից սեպհականութիւնն է: Ապա ուրեմն Կ. Պօլսի պատրիարքարանին և ազգային ժողովին կմնայ փութով հոգալ այն միջոցների գործադրութեան համար, որ աւելի կարեւոր են գաւառականաց պաշտպանութեան համար, որպէս զի սոքա չընկնեն քաթօլիկների լարած թակարդների մէջ: Այս միջոցներից առաջինը և անհրաժեշտը համարելի է այն, որ վիճակները առանց առաջնորդների չըմնան, վասն զի առանց հովուի հօտն աւելի դիւրութեամբ զոհ է լինում գիշատիչներին և որսորդներին: Հարկ է ջանալ ամեն վիճակներում ունենալ արժանաւոր և արթուն առաջնորդներ, որոնք կարող լինին թէ խօսքով և թէ գործով պաշտպանել իրանց հօտը: Խօսքով՝ քարոզելով թէ հրապարակաւ եկեղեցեաց բէմերից՝ և թէ առտնին կերպով, միամիտների աչքը բանալ, իսկ սգեւներին հայ եկեղեցու վարդապետութեան ճշմարտութեան մէջ հաստատել, և այդպէս անխզելի կապերով իրանց մայրենի եկեղեցու հետ կապել. իսկ գործով—մարդասիրական վարմունք, հոգացողութիւն և խնամք կարօտելոց վիճակի վերայ ցուցանել և ուր հարկն է ուհնար է պետական իշխանութեան օգնութեան դիմել, որովհետև չենք կարծում, որ Սամանեան պետութեան շահերին օգտաւէտ լինի Հայ ազգի կրօնափոխութիւնն և նորա յարումն

քաթոլիկ կամ բողոքական եկեղեցեաց, որոնք գտանում են պաշտպանութիւն օտար քաթոլիկ և բողոքական պետութիւններից և որոնք առիթ տալիս սրանց խառնուելու Սամանեան պետութեան ներքին գործոց մէջ, յանուն իրանց հաւատակիցների:

Այս միջոցը ձեռնհաս է բոլորովին ի դերն հանելու Հռոմիայ եկեղեցու ջանքերն ի վնաս հայ եկեղեցու անկախութեան և հայ ազգի գոյութեան. իսկ այդ միջոցի գործադրութիւնն էլ դիւրանում է, եթէ յիշենք, որ ներկայ թէ եկեղեցական և թէ աշխարհիկ հայ դասերի մէջ հոսում է իրանց նախնեաց արիւնը իրանց անկախ և սուրբ եկեղեցու պահպանութեան վերաբերութեամբ: Երբ որեւէ վտանգ սպառնացել է հայ եկեղեցուն, հայ եկեղեցականը կատարեալ անձնուիրութիւն է ցոյց տուած և հայ աշխարհականը պատրաստականութիւն զոհելու ամեն ինչ նիւթական և մինչև իսկ իւր կեանքը: Անցել են այն ժամանակները երբ մարմնաւոր հալածանքներ յարուցանում էին Հայաստանեայց եկեղեցու դէմ թէ կռապաշտ, թէ հեթանոս և թէ օտարադաւան քրիստոնեայ ազգերը. այժմ հայ ազգն ի շնորհս լուսաւորութեան և բարեկիրթ պետութեանց ազատ է այդպիսի հալածանքներից, ուստի և ազատ է արիւն թափելու կարեւորութիւնից իւր սուրբ եկեղեցու համար:

Ներկայումս նրան սպառնացող վտանգը մտաւոր է և հոգեւոր. ուստի և կեանք զոհելու կարիք չկայ. հերիք է, որ հայ եկեղեցական դասն անձնուիրութիւն ցոյց տայ իւր նախորդաց նման և աշխարհականը պատրաստականութիւն ցոյց տան կարեւոր նիւթական միջոցները հայթայթելու իրանց սուրբ եկեղեցու պաշտպանութեան համար: Տարակոյս չկայ, որ այս այսպէս լինելից յետ ոչ պապերի կոնդակներն և ոչ էլ նոցա արբանեակների լարած որոգայթները կարող կլինին խախտելու հայ եկեղեցու մի քարն անգամ: Հայ եկեղեցին դարերի ընթացքում միշտ պաշտպանողական դիրք ունեցած է ամեն տեսակ հալածանոց դէմ. ուստի և նորա զաւակները այդ ասպարիզում կիրթ պիտի լինին և զօրեղ, նա մանաւանդ որ և արդարութիւնն ու ճշմարտութիւնը նոցա զէնքերն են և Հայաստանեայց եկեղեցի աւելի քան որեւէ այլ քրիստոնեայ եկեղեցի իւր հնաւանդու.

Թիւն պահպանելովն կրում է առաքելոց և նոցա յաջորդ-
ների ժամանակ կազմակերպված քրիստոնէական եկեղեցու
կերպարանքը, թէ ըստ վարդապետութեան և թէ ըստ ծիսից
և արարողութեանց:

Վերևը յիշեցինք, որ Կ. Պօլսում թէ հայ եկեղեցականք և
թէ հայ մամուլը գրաւոր պայքարի մէջ տարան փառաւոր յաղ-
թանակ Հռովմայ Սրբազան Պապի կոնդակի դէմ. այժմ մնում
է հանդէս գալ նոյն իսկ պատերազմի դաշտում գործով, այն
է գաւառներում իբրև քարոզիչներ, իբրև առաջնորդներ և
գործել ընդդէմ պապական արքանեակների, որոնք ցրուած
ամեն տեղ աշխատում են մոլորեցնել հայ ժողովուրդը անցե-
լոյն կամայական և սխալ բացատրութիւններով: Հայ քարոզիչ-
ներն և առաջնորդները պէտք է հասկացնեն հայ միամիտ ժողո-
ւրդդեան, որ թշնամեաց առաջ բերած փաստերը սխալ են և
հնարած, և եթէ հայ հայրապետը ոմանք յարգանքը և խոնար-
հութեամբ վերաբերուած են օտար եկեղեցեաց հայրապետաց և
օտար թագակիրների. դորա շարժառիթն ոչ թէ հպատակու-
թեան այլ նոցա քրիստոնէական սիրոյ զգացմունքից ակնկալած
օգնութեան յոյսն է եղած, որոց մէջ միշտ խաբուել են հայ
հայրապետք և փոխանակ օգտի աւելի վնաս ստացած են իրանց
կարծեցեալ և յուսացած բարեկամներից, ինչպէս ցոյց է տա-
լիս մեր ամբողջ պատմութիւնը,

Կ. Պօլսը պատերազմի դաշտի ամենից լաւ պաշտպանված և
ապահով կէտն է, ժողովրդի ընդհանուր զարգացմամբ և հայ
արթուն մամուլի ներկայութեամբ. ուստի և անկարօտ քաջ
զինուորների ներկայութեան և պաշտպանութեան, աւելի կա-
րօտ են օգնութեան և պաշտպանութեան գաւառներն, որոնց
շատերը զուրկ են առաջնորդից են քարոզիչներից հեշտու-
թեամբ կարող են զոհ լինել օտար քարոզիչների ազդեցութեան.
ուստի և հարկ է Կ. Պօլսի պատրիարքարանին և ազգային ժո-
ղովին յիշեցնել այնտեղ գտանվող բազմաթիւ հայ եկեղեցակա-
նաց սոցա անձնուիրութեան պարտականութիւնն և իւրաքան-
չիւրին, համեմատ ընդունակութեան, որոշել գործ և պարտա-
կանութիւն, ոմանց իբրև քարոզիչներ և այլոց իբրև առաջ-

նորդներ ուղարկելով այն գաւառներն, որոնք կարօտ են այդ-
 պիսեաց: Տարակոյս չունինք Հայ եկեղեցականաց անձնուիրու-
 թեան և կյուսանք որ ամենաբարձրաստիճան Հայ եկեղեցականն
 էլ իրան համար նուաստութիւն չի համարիլ Կ. Պօլսը թողնե-
 լով երթալ ամենահամեստ վիճակն թէ իբրև առաջնորդ և թէ
 իբրև քարոզիչ, յիշելով մոլորեալ ոչխարի առակը և Փրկչի
 խօսքը, թէ հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց, իսկ
 կարող և ազգեցիկ աշխարհականք էլ պարտական են թէ նիւ-
 թապէս և թէ բարոյապէս զօրավիգն լինել եկեղեցական դա-
 սին այնպիսի ծանր և քաղցր գործում, ինչպիսի է Հայ ազգի
 համար նորա սուրբ եկեղեցու անկախութեան պաշտպանու-
 թիւնն և Հայ ժողովրդին իւր գոյութեան պահպանիչ եկեղե-
 ցու գրկում պահպանելու պարտքը: Այլ թէ որքոն կարօտ են
 Տաճկաստանի Հայ վիճակներն ընտիր առաջնորդների և քարո-
 ղիչների — այդ Կ. Պօլսի պատրիարքարանին և ազգային վարչու-
 թեան քաջ ծանօթ պիտի լինի: Ինչպէս երևում է լրագիրների
 հաղորդածներից այսպիսի վտանգաւոր ժամանակ մինչև իսկ
 Տիգրանակերտի պէս ընդարձակ վիճակն անհովիւ է և նորա
 հօտը մատնուած օտարների յափշտակութեան, որոյ մասին
 մինչև իսկ մահմետական ոմն ողբացել էր Արևելք լրագրի մէջ:
 Ընդհանուր պարտաճանաչութեամբ են հասարակաց գործեր
 յառաջանում. իւրաքանչիւրի իւր լումայն հասարակաց գանը
 ձարանը գցելով են հասարակական շինուածքները կառուցան-
 վում և հաստատուն մնում: Հայ ազգի փրկութիւնը այս
 պարտաճանաչութեան մէջ է: